

ԻՆՉՔԱՆ ԴՐԱՄՆ Է ԲԱՎԱՐԱՐ

Կյանքի ամենադժվար հարցերի պատասխանը

Մաս 6

«...ի՞նչ շահ կա բացի իրանց աչքովը տեսնելուց:» Ժողովող 5:11

Ա- Ի՞նչ ենք ակնկալում հարստությունից

1. Ավելի բավարարվածություն

«Արծաթ սիրողը արծաթից չի կշտանա, և ոչ էլ հարստություն սիրողը՝ եկամուտից:» Ժողովող 5:10

2. Ավելի հարկանք ու պատիվ

«Որովհետև մարդուս կյանքը նրա ունեցվածքի շատությունից չէ:» Ղուկաս 12:15

3. Ավելի ապահովություն

«Մի թե՛ աչքդ պիտի դնես այն բանին որ ոչինչ է. որ իրան համար անշուշտ թևեր կշինի, արծիվի պես երկինքը կթռչի:» Առակաց 23:5

Բ- Ի՞նչ է բերում հարստությունը իրականում

1. Ավելի մեծ ծախսեր

«Բարիքները շատանալիս՝ շատանում են ու տողները...» Ժողովող 5:11

2. Ավելի մտահոգություններ

«Քաղցր է գործավորի քունը...բայց հարուստի կուշտությունը նրան թող չի տալ որ հանգիստ քնի:» Ժողովող 5:12

3. Ավելի մեծ ցավ, երբ այն կորցնես

«Եվ այն հարստությունը մի չար պատուհասով կկորչի...ձեռքին մի բան չկա. Նա իր բոլոր օրերը խավարումը կուտի, մեծ վիշտով և ցավով և քարկությունով:» Ժողովող 5:14,17

4. Ավելի մեծ պատասխանատվություն, այն իմաստուն կերպով օգտագործելու համար

«Արդ անհրավ մամոնայի մեջ եթե հավատարիմ չեղաք, ճշմարիտ հարստությունն ո՞վ ձեր ձեռքը կտա:» Ղուկաս 16:11

«Որի՞ համար եմ ես աշխատում և գրկում իմ հոգին բարիքից:» Ժողովող 4:8

«Ինչպես որ նա ելավ իր մոր որովայնիցը, մերկ էլ ետ կդառնա, կզնա ինչպես եկել էր.» Ժողովող 5:15

Գ- Ի՞նչ է ուզում Աստված, որ անենք մեր դրամով

1. Լինել շնորհակալ

«Նան ամեն մարդ որին Աստված տվել է հարստություն և կյանք...և իր աշխատանքովն ուրախանալու. սա Աստծո պարզն է:» Ժողովող 5:19

2. Լինել ուրախ

«Լավ օրը լավությամբ անցկացրու, և վատ օրը զգուշություն արա. սրան էլ Աստված նրա կշտին ստեղծեց, որ մարդս իրանից հետո մի բան չգտնի:» Ժողովող 7:14

«Լավ է աչքով տեսնել քան թե մտքով զբաղվել:» Ժողովող 6:9

3. Լինել առատաձեռն

«Հացդ թող տուր ջրերի երեսին, որովհետև շատ օրերից հետո նրան կգտնես:» Ժողովող 11:1

«Ներկա աշխարհիս հարուստներին պատվիրիր...ոչ էլ ունայն հարստության վրա հույս դնեն...բարիք գործեն, բարի գործերով հարստանան, առատաձեռն լինեն ու կարոտյալներին հաղորդակից: Իրենց անձերի համար զանձ հավաքեն՝ բարի հիմք հանդերձալի համար, որ հավիտենական կյանք ձեռք բերեն:» Ա Տիմոթեոս 6:17-19

4. Լինել նվիրված – դնել Աստծուն առաջին տեղում

«Ոչ մի ծառա չի կարող երկու տիրոջ ծառայել...չեք կարող Աստծուն ծառայել ու մամոնային:» Ղուկաս 16:13

«Բայց ձեզ համար երկնքն 'ւմ զանձեր դիզեցեք...որովհետև որտեղ որ ձեր զանձն է, այնտեղ էլ ձեր սիրտը կլինի:» Մատթեոս 6:20-21

Հաջորդ Քարոզի Թեման:
«Ինչո՞ւ Պետք է Աշխատեմ Ջանասիրաբար»
Հովիվ Սարո Խաչիկեան